



Հովսեփ Օրբելի

Ձկա ալյես մեր Երկրի ամենաականավոր գիտնականներից մեկը՝ մեծ քաղաքացի ու հայրենասեր ակադեմիկոս Հովսեփ Արզարի Օրբելին:

Դադարեց գործելուց այն խուզարկու ու փորձված բրիչը, որը տակավին կես դար առաջ սկսեց պեղել Երկրի ընդերքը և ավերակների տակից լույս աշխարհ հանել մեր հնադարյան մշակույթի հոյակապ կոթողները:

Մեռավ այն բազմահմուտ թանգարանագետը, որն իր ստեղծագործական բեղմնավոր միտքն ու կազմակերպչական փայլուն տաղանդը երեսուցից ավելի տարիներ անձնվիրաբար ի սպաս դրեց համաշխարհային կուլտուրայի նշանավոր օջախներից մեկի՝ Լենինգրադի Պետական Էրմիտաժի կազմակերպման ու պահպանման շնորհակալ գործին:

Ձկա ալյես անձնուրաց ու խիզախ այն գիտնականը, որը չնայած իր առաջացած տարիքին և ոչ փայլուն առողջությանը՝ 1942 թվականին, թըշնամու կույճից պաշարված Լենինգրադում, ֆաշիստական ուժերի ճնշման կրակի տակ, որ ու գիշեր գլուխը Ետ դրած, պատվով ի կատար ածեց Էրմիտաժի սոցիալառնական գանձերը խորը բիկունք տեղափոխելու դժվարին գործը, փրկելով դրանք վերահաս ոչնչացումից:

Ընդմիջտ լռեց խոշոր գիտնական-հրապարակախոսի և հոյակապ հոփտորի հուժկու ձայնը, այն ձայնը, որը շուրջ կես դար, առանց կերկերալու ու խզվելու, իր անկրկնելի պաթոսով ու առնական շնչերով հնչում էր ու

միայն մեր լայնածավալ հայրենիքի գիտական ու հասարակական բազմազգ լսարաններում՝ ուսանողների ու դասախոսների, ակադեմիկոսների ու դոկտորների, բանվորների ու գյուղացիների, պիոներների ու աշակերտների, զինվորների ու նավաստիների միջավայրում, այլև նրանց դուրս՝ համաշխարհային գիտական համաժողովների բարձր ամբիոններից, այն ձայնը, որը 1916 թ. Նյուրնբերգյան հայտնի դատավարության ժամանակ իր հզոր ուժով, ի լուր ողջ աշխարհի, իւացրեց ու պատին գամեց ֆաշիստական չարագործներին պաշտպանելու նիգ թափող հիտլերյան «իրավագետին»:

Գոյություն չունի այլևս սովետական արևելագիտության, կովկասագիտության և հայագիտության մեծ օջախի պատկանելի նահապետը, որը, մեծանուն գիտնական Նիկողայոս Մառից հետո, վերջին երեք տասնամյակների ընթացքում մագնիտի պես իր շուրջն էր համախմբում բազում տաղանդավոր ու խոստումնալից երիտասարդների. հոգի ու շունչ, քն ու թիկունք տալիս վերջիններս, լուսավորում նրանց մտքերը, ջերմացնում սրտերը, քաջալերում նրանց մեջ մեծն ու ազնիվը, անխնա դատապարտում մանրն ու ճղճիմը:

Կանգ առավ գրելուց փորձված ու հին, պատկերավոր ու սուր այն գրիչը, որը հիսունից ավելի տարիների ընթացքում գիտությանը պարգևեց հնագիտական, աղբյուրագիտական, պատմա-բանասիրական, արվեստագիտական, լեզվագիտական ու բարբառագիտական բազմաթիվ մեծ ու փոքր, փայլուն ու մնայուն աշխատություններ, որոնցից նառագայթում է տաղանդավոր գիտնականի լուսավոր միտքն ու վառ անհատականությունը, որոնք զարմացնում են նրա ընդգրկումների լայնությամբ ու խորությամբ, կաշառում նրա անգիջում սկզբունքայնությամբ ու ազնիվ կրքով, քննարկվող երևույթների լնորոշ օրինաչափությունները վեր հանելու և համապատասխան ընդհանրացումներ անելու նրա մեծ կարողությամբ:

Մեզ համար առանձնապես մեծ է Օրբելու երախտիքը հայ ժողովրդի հազարամյակների հնություն ունեցող նյութական ու հոգևոր հարուստ ու բազմերանգ մշակույթի ուսումնասիրության բնագավառում: Նրա անունը անխզելիորեն կապված է թյո մշակույթի այնպիսի հոյակապ կոթողների հետ, ինչպիսիք են՝ Անին, Աղբամարը, միջնադարյան Հայաստանի սքանչելի առակները և մեր անմահ եպոսը:

Տակավին ուսանողական տարիներին, Օրբելին մասնակցում է Անիի ավերակներում իր մեծ ուսուցչի՝ Նիկողայոս Մառի կատարած պեղումներին, ուր և նա ստանում է իր առաջին գիտական մկրտությունը: Շատ չանցած երիտասարդ գիտնականը նշանակվում է Անիի նորաստեղծ բանգարանի վարիչ, իսկ արդեն 1910 թվականին նա հրատարակում է բանգարանի նյութերի՝ հմտությամբ ու գործիմացությամբ պատրաստված, լիակատար առարկայացանկ-նկարագրությունը:

1911 թվականին Օրբելին Նիկողայոս Մառի առաջարկությամբ, գործողվում է Արևմտյան Հայաստան՝ հնագիտական, ազգագրական և բարբառագիտական հետազոտությունների համար: Մոտ մեկ տարի անցկացնելով այնտեղ, մասնավորապես լինելով Վանում և Մոկսում, Օրբելին խնամքով և ուշադրությամբ ընդօրինակում է տեղի հայկական վիմակա արձա-

նագրությունները, սիրով ու հիացմունքով ուսումնասիրում Աղբամասի աշխարհահռչակ վանքի նարտարապետական ինքնատիպ կառուցվածքն ու նրա հռչակաբարձր քարձրաքանդակները, հարուստ ու արժեքավոր նյութեր հավաքում Մոկսի հայերի ու քրդերի բառ ու բանի վերաբերյալ:

1916 թվականին հայրենասեր գիտնականը պեղումներ է կատարում Վանի միջնաբերդում, որի արդյունքը լինում է ուրարտական բազավոր Սարգուր 2-րդի նշանավոր սեպագիր ընդարձակ արձանագրության հայտնաբերումը, ուրարտագիտության համար բացառիկ նշանակություն ունեցող իսկական մի գյուտ Նետագա մի քանի տարիների ընթացքում Օրբելին ըզբաղվում է Հայաստանի տարբեր վայրերից զանազան ժամանակներում իր հայտնաբերած ու հավաքած 1000-ից ավելի հայկական վիճական արձանագրությունները հրատարակության պատրաստելու՝ ոչ միայն մեծ հմտություն, այլև խոշոր աշխատանք ու ջանք պահանջող մանրակրկիտ գործով:

1918 թվականից աշխատելով Լենինգրադի Պետական Լրմիտաժում, ապա նաև նույն քաղաքի Պետական համալսարանում, Արևելագիտության ինստիտուտում և ունենալով շատ պատասխանատու պաշտոններ ու պատվոթյուններ, այդուհանդերձ Օրբելին երբեք չի բուլացնում իր կապը Հայաստանի և իր հարազատ ժողովրդի մշակույթի հետ:

1942 թվականին տեղավորվելով Նրևան նա, իբրև Միությանական Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի նախագահ, վերջինիս շուրջն է համախմբում հանրապետության գիտական՝ ուժերին, նոր բափ հաղորդում նրա գիտական հիմնադրների գործունեությանը, դրանով իսկ նախապատրաստելով Հայաստանում Գիտությունների ակադեմիայի հիմնադրման գործը: 1943 թվականի վերջերին հիմնադրվում է Հայաստանի Գիտությունների ակադեմիան և Օրբելին կարգվում է նրա առաջին պրեզիդենտ: Օրբելու՝ խոր արժաններ ունեցող ներհուն հայրենասիրության և նրա առնչվող բնավորության բնութագրման համար շատ բնորոշ է հետևյալ փաստը: Հայաստանի Ակադեմիայի հիմնադրման հանդիսավոր նիստից անմիջապես հետո, հետևյալ իսկ օրը, նա, սեփական նախաձեռնությամբ, մի խումբ մտերիմ-ընկերների հետ, մեկնում է Օշական՝ իր և իր հարազատ ժողովրդի անհուն երախտագիտությունը տանելով հայ գրի ու գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցի շիրմին:

1944 թ., չնայած պատերազմի պատճառով մեզանում ստեղծված ճգնառարաժական ծանր պայմաններին և բղքի սղությանը, Օրբելու հեղինակավոր ու գործոն միջամտությամբ գլուխ է բերվում Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» ծանրակշիռ ու մնայուն աշխատության առաջին հատորի տպագրության գործը, որի հեղինակի ներկատմամբ նա հատուկ հարգանք էր տածում, համարելով նրան դասական հայագիտության ամենակարևոր ու ղեկներից մեկը:

Ավելի ուշ, 1955—1957 թթ. Օրբելին, ընդառաջելով Հայաստանի Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի դիրեկցիայի և գիտական կոլեկտիվի բուռն ցանկություններին, իր համաձայնությունն է տալիս դառնալու նրա աշխատակիցը և Երևա տարի շարունակ, բանիվ ու գրչով մասնակցում նրա գիտահետազոտական աշխատանքներին:

Եղված տարիներին Օրբելին բե՛ր անձամբ (Նրևանում Եղած միջոցներին) և բե՛ր հեռակա կարգով (Լենինգրադից), իր ծանրակշիռ խոսքն է ասում Ինս-

տիտուսում ըննարկման պրված կարևորագույն գիտական հարցերի առթիվ է. միաժամանակ, տպագրության և պատրաստում և ինստիտուտի գրողով հրատարակում է իր երկու գործերը՝ «Միջնադարյան Հայաստանի առակները», որը լույս տեսավ 1956 թ. Լենինգրադում ուսուսերեն լեզվով, և «Հայկական հերոսական էպոսը», որը նույն թվականին լույս տեսավ երևանում, հայերեն և ուսուսերեն լեզուներով:

Հիշյալ երկու աշխատություններն էլ Օրբելու հայագիտական կարևոր գործերից են:

«Միջնադարյան Հայաստանի առակները» գրքում տեղ են գտել Միլիարար Գոշի առակներից և Վարդան Այգեկցուն վերագրված առակների ժողովածուներից Օրբելու կողմից մեծ նաշակով ու հմտությամբ ընտրված շուրջ 150 հայկական առակների նույնպիսի նաշակով և բարձր արվեստով կատարված նրա ուսուսերեն թարգմանությունները: Գիրքն ունի նաև գիտական անհրաժեշտ ծանոթագրություններ և ամփոփ, բայց արժեքավոր մի առաջաբան, ուր հակիրճ ձևով բնութագրված են միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմանները և վերլուծված ու զննահատված են դրանց յուրօրինակ արձագանքը հանդիսացող հայկական առակները: Իր այս աշխատությամբ Օրբելին կատարեց շնորհակալ մի գործ: Հայ ժողովրդի ստեղծագործ հանճարի և Հայկական վերածնության հանաչողական ու զեղարվեստական մեծ արժեք ներկայացնող ինքնատիպ այդ գոհարները, նա ուսուսերենի միջոցով դուրս բերեց համաշխարհային ասպարեզ, ճիշտ այնպես, ինչպես ուղիղ չորս տասնամյակ դրանից առաջ նույնը արել էր Վալերի Բրյուսովը միջնադարյան հայ բանաստեղծության լավագույն նմուշների նկատմամբ:

Անուրանալի է նաև Օրբելու «Հայկական հերոսական էպոսը» աշխատության արժեքն ու նշանակությունը: Սակայն, այդ մասին խոսելուց առաջ, նախ համառոտակի անդրադառնանք հայրենասիրական այն մեծ գործին, որ կատարեց նա «Սասունցի Դավիթ» հոբելյանի ժամանակ, 1939 թվականին:

Օրբելին հայկական էպոսին ծանոթանում է ներկա դարի սկզբներին: Տակավին Երիտասարդ ուսանող էր նա, երբ Պետերբուրգում լույս տեսնող Ռուսական Հնագիտական բնկերության Արևելյան բաժանմունքի «Նոթեր»-ի IV գրքում առիթ ունեցավ կարդալու իր մեծանուն ուսուցիչ Նիկողայոս Մառի գրախոսությունը՝ Մանուկ Արեղյանի հրատարակած «Սասնա ծռեր» ժողովրդական դյուցազնավեպի մոկաց մի պատումի մասին: Շատ չանցած, 1911 թվականին, Մոկսում և Վանում, Օրբելին մոտիկից շփվում է մոկացի զգրարների հետ, ծանոթանում «Սասնա ծռերի» մասին նրանց պատմած գրույցներին, իսկ Վանի մոտ՝ Մհերի դղան սեպագրերն ուսումնասիրելիս, ականջալուր է լինում Դավիթ որդի Փոքր Մհերի ավանդավեպին:

Տարիներ հետո անդրադառնալով Դավիթի և Մհերի՝ Հայաստանի զանազան վայրերում քողած հետքերին, Օրբելին գրել է. «Մոկս գավառում ինձ ցույց են տվել Բարձանա կամուրջը, ուր Դավիթն ընդհարվում է Մըսրա Մելիքի երկու փահլևանների հետ: Իսկ Վան քաղաքի մոտ, միջնաբերդից չորս կիլոմետր հեռավորության վրա տեսել եմ Մհերի հուսկավոր դուռը: Դա իրոք գուռ հիշեցնող մի քանդակ է վիքիարի ժայռի վրա՝ սեպատառ մակագրությամբ: Քարանձավի մուտքի առաջ, ժայռի մեջ մի փոքր փոս կա.

դա այն տեղն է, ուր դուռը բացվելուց առաջ անհամբերությունից սմբակով խփել է Քուռկիկ Ջալալին»¹:

Վաղուց և լավ ծանոթ լինելով «Սասնա ծռերին», վերջինիս ծնունդ ու սնունդ ավող պատմական, տեղագրական և ազգագրական միջավայրին, Օրբելին, սակայն, հայկական հերոսական էպոսին ընդհուպ մոտենում է միայն 1939 թվականին, երբ 1000-ամյակի տոնակատարության շրջանում, երբ Հայաստանի կառավարությունը ականավոր գիտնականին հանձնարարում է ղեկավարելու հորեյանական մի շարք կարևոր միջոցառումներ: Սիրով ու սրտանց ընդունելով այդ հանձնարարությունը, Օրբելին իրեն հատուկ խաղաղավարությամբ ձեռնամուխ է լինում հարազատ ժողովրդի հնադարյան մշակույթի այդ մեծ հանդեսի կազմակերպման ու իրականացման ուղղությամբ իր վրա դրված պատվավոր ու պատասխանատու աշխատանքներին: Նա կարևոր դեր է կատարում նախ և առաջ «Սասունցի 'Դավիթ'» հայերեն և ռուսերեն համահավաք հյուսված ընթերցանական ստեղծման գործում: Նրա խմբագրությամբ ներկայում լույս են տեսնում վեպի հայերեն ու ռուսերեն, և էնեինգրադի ռուսերեն հորեյանական հրատարակությունները: Ամենահաճախ Ֆեոդոր Մուրմիսեյեցի, Օրբելին հորեյանցի հարցերով լինում է մերթ ներկայում, մերթ էնեինգրադում, ներկայից մեկնում է Մոսկվա, Մոսկվայից նորից վերադառնում ներկայում, նախաձեռնում, ղեկավարում, ցուցումներ է տալիս, անձամբ մասնակցում այս կամ այն գործին: Նրա մտահղացմամբ ու կազմած ծրագրով «Սասունցի 'Դավիթ'» դարաշրջանին նվիրված հետաքրքրական ցուցահանդեսներ են կազմակերպվում ներկայից Պետական պատմական թանգարանում և էնեինգրադի Պետական էրմիտաժում: Հորեյանական ամբողջ տարվա ընթացքում Օրբելին հայ ժողովրդի և Սովետական Միության մյուս ժողովուրդների ամենալայն շրջանների համար, տարբեր տիպի լսարաններում, բազմաթիվ դասախոսություններ ու զեկուցումներ է կարդում «Սասունցի 'Դավիթ'» մասին, իրեն հատուկ կենդանի ու զուներդ, ինքնատիպ ու պատկերավոր հոստոթական ներշնչուն խոսքով վեր հանում վեպի կուլտուրալ-պատմական, գաղափարակա ու զեկուլտուրական մեծ արժանիքները: Նույն ժամանակամիջոցում նա Սովետական Միության տարբեր վայրերում լույս տեսնող բազմաթիվ թերթերի ու ամսագրերի համար գրում է ներսունից ավելի մեծ ու փոքր հոդվածներ՝ նվիրված «Սասունցի 'Դավիթ'»:

Հատուկ ու առանձին պետք է հիշատակվեն վեպի հյուսված համահավաք ընթերցանական հայերեն և ռուսերեն հրատարակությունների համար ականավոր գիտնականի գրած ընդարձակ առաջաբանները և մասնավորապես էնեինգրադի ականաբանական հոյակապ հրատարակության մեծ առաջաբանը, որն ինքնին հետաքրքիր ու կարևոր մի հետազոտություն է և առաջնակարգ տեղ կարող է զբաղեցնել նրա հայագիտական լավագույն գործերի շարքում:

«Սասունցի 'Դավիթ'» նվիրված իր աշխատությունների մեջ Օրբելին ստեղծագործող գիտնականի իր արժվենի հայացքով թափանցել է հայկական էպոսի էության մեջ, առաջ է քաշել նրա հետ կապված մի շարք կարևոր հարցեր, բացահայտել է վեպի բովանդակության ու արվեստի առանձնահատկությունները: Այդ հարցերից են՝ «Սասունցի 'Դավիթ'» պատմական

¹ Հովսեփ Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1936, էջ 53.

միջոցով ու ձևավորման, նրա ժողովրդայնության, նրա մեջ հարուստ արտացոլում գտած հին Հայաստանի կոսմիկական առասպելների և մյուս ժողովուրդների առասպելական հնագույն պատկերացումների միջև եղած ներմանությունների ու ընդհանրությունների, վեպի սյուժետային գծի զարգացման, նրա կերպարների, լեզվի ու ոնի հարցերը:

Հայկական էպոսը Օրբելու համար սիրելի ու հարազատ բեմա է մնում նաև վեպի հորելյանից հետո: Ականավոր գիտնականը հետագա տարիներին էլ տարբեր առիթներով անդրադառնում է «Սասունցի Դավիթ»-: Այս տեսակետից հատկապես հիշատակելի են Հայրենական պատերազմի ժամանակ Սովետական Քանակի զորամասերում՝ հրամկազմի, զինվորների ու նավաստիների համար նրա կարդացած ոգեշունչ դասախոսությունները, որոնց մեջ Օրբելին շեշտը դնելով հայկական էպոսի ազատասիրական, հերոսական ու հայրենասիրական բնորոշ մոտիվների վրա, Դավիթի և Մհերի օրինակներով՝ հայրենապաշտպան արդար պատերազմի էր կոչում սովետական ռազմիկներին գերմանական զավթիչների դեմ:

«Սասունցի Դավիթ» մասին Օրբելին գրել և զեկուցումներ է կարդացել նաև պատերազմից հետո: Այսպես, 1955 թ. հայկական էպոսի չինարեն թարգմանության համար, չինացի ընկերների հատուկ խնդրանքով, նա գրում է համապատասխան մի առաջաբան: 1956 թ. ձմռանը Լենինգրադի համալսարանում՝ ուսանողների ու դասախոսների բազմամարդ լսարանի առաջ նա հանդես է գալիս հայկական էպոսին նվիրված ընդարձակ զեկուցումով: Նույն տարին Հայաստանի Ակադեմիայի հրատարակչությունը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով լույս է ընծայում Օրբելու վերևում արդեն հիշված գիրքը «Հայկական հերոսական էպոսը» վերնագրով, որտեղ ի մի են բերված և վերամշակված «Սասունցի Դավիթ» համահավաք խմբագրության երեքվանի հայերեն ու ռուսերեն և Լենինգրադի ռուսերեն հրատարակչությունների համար հեղինակի գրած ընդարձակ առաջաբան-հետադադությունները, ինչպես նաև հորելյանական պլենումում և Միությանական Գիտությունների ակադեմիայի հատուկ նիստում 1939 թ. նրա կարդացած զեկուցումները:

Հայկական էպոսին նվիրված Օրբելու աշխատությունների մեջ ցայտուն ձեռքով երևան են եկել ականավոր գիտնականի բնորոշ առանձնահատկությունները: Ինչպես իր մյուս գործերում, այնպես էլ այստեղ նա հանդես է գալիս իրեն մեծ էրուդիցիայով օժտված, ստեղծագործական խոշոր թռիչքի ու բափի տեր, ըստ ամենայնի ինքնուրույն միտք ունեցող մի գիտնական: Նա չի հարասում ուրիշներին, այլ առաջադրում ու հաստատում է սեփական կարծիքներն ու եզրահանգումները. կարծիքներ ու եզրահանգումներ, որոնք մեր միջնադարյան հոյակապ մանրանկարների նման զրավում ու հիացնում են իրենց չկրկնվող բարմությամբ, ուրույն երանգներով և վառ գույներով: Ինչպես իր մյուս գործերում, այնպես էլ այստեղ, Օրբելին իր հետադադության առարկայի հետ կապված խնդիրները չի սահմանափակում ազգային շրջանակներով: Հայկական էպոսը նա համարձակորեն դուրս է բերում միջազգային բառերարեմ և ղեկով այն համաշխարհային մյուս էպոսների հետ մի նմարի վրա, ընդգծում է նրա մեծ արժեքը: Ինչպես Օրբելու հայագիտական մյուս գործերը, այնպես էլ «Սասունցի Դավիթ» ներկրված նրա աշխատությունները, սկզբից մինչև վերջ, սողորված են իր հարազատ ժողովրդի բազմադարյան մշակույթն անկաշառորեն սիրող և այն

խորապես գնահատող մեծ գիտնականի հայրենասիրական վարակիչ պարոսով:

Շատերն են զրադվել հայկական էպոսով: Կարելի է րվել բազմաթիվ անուններ. որոնք շնորհակալ գործ են կատարել տվյալ ուղղությամբ՝ հայտնաբերելով, զրի առնելով և հրատարակելով նրա առանձին տարբերակներն ու պատումները: Քիչ չեն և այն բանասերները, գիտնականներն ու զրոգները, որոնք առանձին զրբեր ու հրդվածներ են զրել «Սասունցի Դավրի» մասին, ուսումնասիրել են նրա այս կամ այն կողմը, ձգտել են վեր հանել հրա մեջ բարձրված զանձները՝ Սակայն այդ շատերի մեջ առանձնանում են երեք հոգի. երեք մեծ երախտավորներ, որոնց կատարած դերը պատմական արժեք ունի՝ Դրանցից առաջինը, մեր բազմավաստակ բանահավաք ու բնագետ, արժանահիշատակ Դարեգին Սրվանձոյանն էր, որը գիտության համար հայտնագործեց մեր վեպը՝ 1873 թվականին զրի առնելով և 1874 թվականին հրատակելով նրա առաջին պատումը: Երկրորդը, մեծանուն հայագետ Մանուկ Արեղյանն էր, «Սասնա ծռերին» նվիրված ամենահմուտից, խորը և բազմակողմանի ուսումնասիրությունների բազմահմուտ հեղինակը հայ իրականության մեջ: Երրորդ երախտավորը Հովսեփ Օրբելին էր, որը «Սասունցի Դավրի» համբավը բանիվ և զրչով տարածեց Սովետական լայնատարած երկրի բազմազգ ժողովուրդների մեջ, իր հեղինակավոր խոսքն ասաց մեր վեպի մասին և զրանով իսկ մեծապես նպաստեց հայկական էպոսի՝ մարդկության ստեղծած լավագույն վիպական ստեղծագործությունների շարքում իր արժանի տեղը զրավելու կարևոր գործին:

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, իր շուրջ ուր տասնյակ մանր ու խոշոր սպազիր հետազոտություններից բացի, թողել է նաև բավական հարուստ ձևագիր ժառանգություն, ուր կարևոր տեղ են զրավում նրա հայագիտական ինչպես ավարտուն, այնպես էլ բերավարտ մի շարք գործերը: Դրանց մեջ, առաջին հերթին, պետք է հիշատակել հանգուցյալ գիտնականի բարբառագիտական ու բանագիտական մեծ արժեք ներկայացնող «Մոկաց տեքստեր» վերնագրով աշխատությունը, նվիրված Մոկսի հայերի բառ ու բանի նմուշներին, որոնք հեղինակի կողմից անձամբ զրի են առնվել Մոկսում, տակավին 1911 թվականին: Դրանց մեջ, այնուհետև, պետք է նշել Օրբելու Անիի և նրա շրջակայքի վիժակուն արձանագրությունների մեծ հավաքածուն, Աղյամարին նվիրված ծավալուն աշխատությունը, Մխիթար Դոշի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված ընդարձակ մենագրությունը՝ Նդիշի «Վարդանանց պատմության» և Խովմա Արձրունու «Արձրունյաց տան պատմության» ռուսերեն թարգմանությունները և այլն:

Հայաստանի ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի և նրա կազմի մեջ մտնող՝ Հնագիտության ու ազգագրության, Պատմության, Դրականության, Արվեստի ու Լեզվի ինստիտուտների սրբազան պարտքն է լրջորեն զրադվել Օրբելու թողած գիտական անտիպ ժառանգության ուսումնասիրությամբ և լույս աշխարհ հանել այնտեղ եղած կարևոր ձևագիր աշխատությունները:

Հայրենասիրական այդ մեծ գործով մեր ժողովուրդը լավագույնս հավերժացրած կլինի իր արժանավոր զավակի պայծառ հիշատակը: